

Հ Ա Ռ Ա Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐքԱՐԱՆԻ

Ս. Աթոռոյս Ամեն. Պատրիարք Սրբազն Հայրը, ընդունած ըլլալով
 հրաւէրը Հռոմի Սրբազն Քահանայապետ Յովհաննէս - Պօղոս Բ.ի, Հինգ-
 շաբթի, 30 Սեպտեմբեր 1982ին, օդայն գծով մեկնեցաւ Հռոմ, ընկերակ-
 ցութեամբ Ս. Աթոռոյս նորընտիր Դիւանապետ Գերշ. Տ. Դաւիթ Եպս.
 Սահակեանի եւ երուսաղէմի Ֆրանչիսկեան Միաբանութեան մեծաւոր
 (Կիւսթոտ) Հայր Խկազի Մանլինի, ներկայ ըլլալու Կիրակի, Յ Հոկ-
 տեմբերին տեղի ունենալիք կրօնական այն արարողութեան, որով Պապը
 երանութեան վիճակին պիտի բարձրացնէր Ֆրանչիսկեան Հայր Սալվաթօր
 Լուկին, իր եօթը հայ հետեւորդներով, որոնք նահատակուած են 1895
 Նոյեմբեր 22ին Մարազի մէջ:

Հանդիսութեան օրը, յաւարտ Ս. Պատարագի, Սրբազն Պապի ու
 Ամեն. Պատրիարք Սրբազն Հօր միջեւ տեղի ունեցաւ մտերմիկ տեսակ-
 ցութիւն մը եւ նուէրներու փոխանակում:

Ամեն. Սրբազն Հայրը իր հետեւորդներով վերադարձաւ Ս. Աթոռ
 Հինգշաբթի, Յ Հոկտեմբերին:

Դիւան Ս. Աթոռոյս

Երուսաղէմ, 14 Հոկտ. 1982